Օրը չոր ու ցամաք անցնելով՝ Եթէ կարելի էր մէկը տեղ մը հասցնել ինչո՞ւ չէ, անհրաժեշտ էր որ ըլլար ատիկա: Նեղուծիւն, տառապանք շատ տեսած էին, այնքան շատ որ կարծես թէ ալ վարժութեամբ էին անոր, ընտելացած անոր հետ: Կտոր մը սեւ հաց, քանի մը ձի - թագարուղ, տարուկ ապուր մը շատ հեղ իրենց կէսօրուան կամ երկէրեան ճաշը եղած էր, ինչ կ'ըլլար, թող ատեն մըն ալ այդպէս շարունակուէր, հարկաւ օրերը այդպէս չէին մնար:

Անձանօթ կին մը իր մահուան դնով Աշուր փրկած էր մեծ սպանդէն, - այսպէս պատմած էր ինք, - ինչո՞ւ իրենք

Կը պատմեն, թէ ժողովուրդը նաեւ - բուն մէջ տեղափոխելու գործողութեան հակելէ ետք, Մուսա - Տաղի քառասուն օրերու ստորեակին բովանդակութիւն ու գիտեցողական բնոյթը առողջ կտորիները շնորհակալութիւն կը յայտնեն հրամա - նատարութեան ու կը ներկայացնեն իրենց կամքը:

— Մենք հոս կ'ուզենք մնալ: Իմանալի է անշուշտ « հոս » մնալու կերքին թաքուն շարժանիքը: Անպատկէն ճիշդ հասած էին արդէն. գիտնոր տարուած երիտասարդներուն արիւնտ լուրերը հասած էին մարթուող անտեղ - ներու ճիշդեքն առաջ: Սաղազ ափերուն խաղաղութիւնը պիտի վերաւորէր իրենց խղճմանը. տուեալ պահուն, թշնամի - ին տրուած որեւէ հարուած կէշու ունէր:

— Մենք հոս կ'ուզենք մնալ: Զմայցին: Զմայցին որ մնան: Եւսա - տորմին հրամանատարութեան կողմէ խոստացուեցաւ, որ թուրքին դէմ կ'ը - ուելու առիթ պիտի տրուի իրենց: Մեկ - նեցան: « Հոն » մնալու տեղը բորբոք մնաց ու Փոր - Սայիտ խարխիս նետելէ ետք՝ դարձաւ իսկ շմայլու կրակ: Փո - թորկայոյց արարքներու ծարաւը, շյտ - գեցած վրէժին ազազող կտորակեց, որ կազմուի հոշակաւոր Հայկական բանա - կին կորիզը, որ իր կարգին պատճառ դարձաւ, որ հանդիսա ջման ու իրենց տեղը ջման հարիւրաւոր ու հարիւրաւոր վրէժի խնդիր երիտասարդներ: Եկան աշ - խարխի չորս ծագելէն, դարձան չորս հազարնոց բանակ, որ բախտորոշ օր մը խորտակեց թուրքին անառիկ դիրքերը ու Արարայի վրայ տեսաւ անոր ծնկաչոք պարտութիւնը:

— Մենք հոս կ'ուզենք մնալ: Մուսա - Տաղին ծնունդ շտաներ ու Ա - բարայի յաղթական ճակատամարտին չի յանդիւր այս խոռոխէ տրամադրութիւ - նը: Կուգայ հինէն, մեր պատմութեան հետունքէն ու կը շարունակէ արթուն պահէլ սրտերը: Թերեւս ինչ որ յարգանքի արժանի բան ունինք տուել եղած է հայկական ստողը այս բնագոյն թեւ - կին գանազանութիւնը կ'ընէ նայ, արդար - ընն ու անարդարին սասնանները կը դժէ, կը փոխակերպուի ապա քաջու - թեան, կը դառնայ գեղեցկութիւններու ծնուցիչ ուժ, պաշտամունք ու յամառու - թիւն: Հայոց պատմութեան համարեա՛ր բոլոր կէքերը կազմուած են ապրումներու եւ շարժումներու այս յաջորդականու - թեամբ: Ատոնց շնորհիւ էր, որ ունի ցանք հայրենիք, ապա կրօնք, երգ, ու - թիչ մեծագործութիւններու նսկայ դու - մար մը ու պահեցինք հայրամետաք մեր արիւնին սեփական կարկաչը: Ստեղծե - ցինք: Պահեցինք, Տեղեցինք: Կը ստեղ - ծենք տակաւին, կը պահենք, կը տեսնենք, որովհետեւ՝

— Մենք հոս կ'ուզենք մնալ ...:

Պ. ՄԱՍՊԵԱՆ

պիտի ընկրկէին: Իրենց փնտառը հիմա, չար, անսպասելի անակնկալ մը չպա - տահէր, Աստուած ուժ ու կարողութիւն տար մնացեալը երկրորդական էր:

Բայց, ժամանակի ընթացքին, իրերը սկսան տարբեր ընթացք ստանալ: Երա - խաները քանի մեծցան աւելի պահանջ - կոտ դարձան: Անոնց ստորեակին գուրս դարձողական ծախքերը գրեթէ կրկին - պատկուեցան, հարկ էր այդ բոլորին հասնիլ, գիմանալ:

Պ. Վարդան իր գործին գուրս, առ - նին մէջ սկսաւ տարբեր գործերով ալ զբաղիլ քանի մը տրամօրի աւելի շահելու համար: Տիկին Սիրաբիբին «այլաժանութի - ճի ժամերը» շատ երկարեցան, ինչ որ մեծ մասնակցութիւն կը պատճառէր յատ - կապէս Աշուտին: Իր ինչին, ի՞նչ բանի համար այսքան գոհողութիւն պէտք է ընէր այս առաքելատիպ բնասիրը:

Պ. Վարդան, ատոնց մէկուն ղրպանե - լու, զնաց քանի մը ունեւորներու գուռ - ները բախեց. պարզեց խնդիրը, բայց ի - դրո՛ւր:

— Ես ինձի համար օր մը չեմ մտածած մէկէն լեփտա մը ուղիւ, այս անեղանու - թիւն որք տղու մը համար է, բայց էր բոլորին: Բայց անոնք, ամէնքն ալ, կար - ծես մէկ խօսք ըրած, պատասխանած էին իրեն նոյն անպէտ առարկութիւններով: — Ի՞նչ պիտի ընէ դպրոց երթայ, դպ - րոցը փոր չի կշտացնէր... Իպրոց պիտի

ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԸ ԵՐԿՐԷ ԵՐԿԻՐ

ՖԻՐԷՆՑԷԻ «ՈՒՓՅԻՉԻ»Ն

Ամբողջ իտալական թերակղզին ինքնին բացօթեակ թանդարան մըն է: Կարելի է որեւէ քաղաքի որեւէ փողոցին մէջ շք - ջիլ ժամերով, անտնալ դարերու կնճիռ - ներով խորշամած բայց միշտ լուսաւոր, տեսակ մը արեւելեան փոշիով ու երկով ոսկեգօծ հրապարակներուն վրայ ե կը - բեք շածանմանալ: Իտալիոյ մէջ դժուարը ընտրութիւնն է. ընտրել թանդարան մը՝ որ ամէն ինչ մեղի մոռցնելու արժանիքը ունենայ: Ատոնց անդրադառնալու Հոռո - մի կամ Միլանի մասին, որ շնորհիւ Պրէտրայի Լուվրի կամ Փրատտոյի արժանի պատկերաբաժն մը ունի, պատահելու ամէնէն աննշան քաղաքներն իսկ արուես - տի այնպիսի հազուագիւտ նմոյշներ ու - նին՝ որոնք կը գարմացնեն արուեստի սիրահարները: Կարելի չէ տեսած ըլլալ ու կարօտով չլիբըշիլ Վենետիկը, Պէր - կամօն, Արէճձօն, Ուրպինօն կամ Ֆերրա - բան: Ամիսներ պիտի չբաւէին վայելելու համար զանազան մեծ արուեստագէտնե - բուն յի մանաւորի Ռաֆայելի կամ Փի - էթրոյի արուեստի գլուխ գործոցները՝ նետուած իտալիոյ բոլոր անկիւններու այս կամ այն եկեղեցիին, այս կամ այն խալիքիւմ պալատին մէջ: Կը բաւէ անգամ մը մուտք գործել Վենետիկ Ա. Բատեմիա Տէլլէ Պիլլէ Արքեիմ կամ Փիլաոսիայի Ազգային Պատկերասրահին մէջ, ըմբռ - նելու համար թէ Իտալիոյ գաւառական թանգարաններն իսկ կրնան համահաւա - սար ըլլալ թաղանթական որեւէ հաւա - քածոյի:

Եթէ լաւը կայ, անպայման կայ նաեւ լուսադոյնը, եւ Ֆիրէնցիի Ռեֆֆիչիա թանդարանը բոլոր միւսներուն մէջ Եթէ ոչ լուսադոյնը, լուսադոյններէն մէկն է: Ֆիրէնցէ քաղաքը արդէն, բոլոր անոնց համար որոնք իրենց սրտերուն մէջ ունին գեղեցկութեան երազի մը անկիւնը, կը մնայ լուսաւոր ճարտարապետութեան նրբահու քերթուածը: Ընդունինք սա - կայն թէ Ռեֆֆիչի թանդարանը, Ֆիրէն - ցիի ճիւղ սրտին, արտաբուստ չի ներ - կայանար Տոստական կամ Փիթիի պալատ - ներուն հմայքով: Ռեֆֆիչիին մէջ ամէն ինչ խիստ է, կարծր, երկրաչափական: Եհնքը կը նմանի աւելի զօրանոցի՝ քան պալատի. արդէն իսկ իշխանին բնակա - վայրը չէ եղած, այլ իր պաշտօնեանն - րուն եւ դատաւորներին: Տակաւին պա - հած է Վաղարեան տունը խիստ դիմադի - քը: Բայց երբ սրահներուն մէջու ներք, կարելի է մտնալ հանդիսաւոր եւ ծանր սաստիճանները, ապակեպարզ ազոտ մեծ պատուհանները, կարելի է մտնալ ամէն ինչ՝ դէմ յանդիման զըլլիչ գեղեցկու - թիւններու հետ:

Կարելի է արագ անցնիլ Ֆրաման մե - ծածաւալ գործերու սրահէն, կարելի է

շուշանալ նոյնիսկ առաջին երեք սրահ - ներուն մէջ — Եթէ երբեք կարելի է պարզ ակնարկով մը միայն ողջունել ձիթթօն, Տուչչիօն եւ Չիմսպուօն — հասնիլ ու մնալ ազաւարին մէջ՝ առ - կեցած են, կոյք կոյքի, Կիլլանտալան Լիփիին եւ Պոթթիչիլլին՝ Հուլիօ Վան տէր Կիօսի նշանաւոր նկարին շուրջ: Գու - բերու ընթացքին, փոքրիկ այս տալա - սարին մէջ, քանի՜ աչքեր շրջած, քանի՜ սրտեր բարբախտ են գեղեցկութեան յո - սով:

Հուլիօ Վան տէր Կիօսի մոդերուն երկ - կրպագութիւնը... Գիտակ դիտակ թու - ուղ խարսխահար այս կոյսին հետ դէմ առ դէմ, չըջապատուած՝ ծնրապէր հրե - տակներով, հովիւներով՝ որոնց իրպաշ - տութիւնը սպաննական բան մը ունի, սի - ներու եւ գերաններու այս տէքարին մէջ նր կ'երկարի լեռն ի վեր, կ'ուրուայի միջնագրան բաղաւք մը՝ Մէղի կամ Ռէնի բաց կապոյտին կամ անտէ կամ անոյ ժողովուրդին մէջ թաթիւտած քանիսն՝ թթափեցին իրենց աննպակոտ պատանութեան մառախուղն ու բոլոր խոտվայոյց փոթորիկները: Գանիւնը՝ դիտելով առաջին կարգին վրայ ծաղիկ - ներու երկու փուռները, Ս. Յովսէփի փայտէ ջրգեղուած մուծակը եւ ծնրապէր հրեշտակներուն Ժանեկապար վերաբո - ները՝ առաջին անգամով զգացին նկար - չութեան ուժն ու բանաստեղծութիւնը:

Հուլիօ Վան տէր Կիօս... Եւ յետոյ Կիլլանտոյ Լիփիի, Պոթթիչիլլի... Ինչ որ հիանալի, սքանչելի է Հուլիօ Վան տէր Կիօսի Մագիքու Երկրպագու - քեան մէջ Փերապիեթիի այն դարձա - լի վարպետութիւնն է որ բոլոր գիծերը կը տանի Կոյսին սրտին, որուն շուրջ կը կարգաւորէ գիտնորներն ու մողերը, ազ - նուականներն ու սպանները՝ նկարներու եւ սիւնաքարը գուններու հրաշալի խո - նակոյտի մը մէջ:

Այսօր Լիփիին կորանցնելու վրայ է իր պատուանդանը: Ետտեք կը նախաճառն Պիլլիին՝ աւելի տարածուն ու շատ ա - լելի խորունկ: Մատուցան չափազանք քնուէր է, մաքուր, բերեկային, թա - փանցիկ, դրկիւն մէջ մանուկը քէ մը շա - թիւց, բնասելու շէշուած վարպետու - թեամբ յորինուած, հրեշտակ արք կը թարթէ, այնքան որ, այս մենակային այսքան անուական, այսքան նրբաբա - նկարչութեան մէջ, լուրջ մտնողութիւնը պակասը մատնող արուեստակատութեան մը կայ: Որքան հմայիչ է այս Մատու - ճան, այս՝ բայց եւ որքան աշխարհիկ իրական կին ըլլալու համար:

Եւ ամէս Պոթթիչիլլին... Ո՞վ անցած է Ռեֆֆիչիլլինն է ի իշխան այն վայրի - նը՝ երբ առաջին անգամ դիտած է երբ - տասարդ այն աղջիկը որ կը ծնի ալթին - հրաշալի վայրկեան, երբ հրեշտակներու շունչով հոգին մոտաք կը գործէ իր մէջ. զայն կը կենդանացնէ, կը կերպաւորէ և կը բարձրացնէ մեր աչքերուն առջեւ: Եւ ասկաւին կատարեալ գեղեցկութեամբ:

Երթայ վարժապե՞տ ըլլալու համար... վարժապետներուն վիճակը չի՞ տեսներ... Դպրո՞ց, վաղը անօթի մնալու միտք ու - նի կ'երևայ:

Ու հազար ու մէկ նման առարկութիւն - ներ ...:

Մինչ նեղութեան, զրկանքի, թշուա - ութեան օդակը երթալով կը սեղմուէր Նիլ բնասանիքին շուրջ: «Ո՛չ, այս վիճա - կը այլևս ատանելի էր, պէտք էր աւելի երկարել», կը մտածէր Աշուտ, բայց ի՞նչ ընէր, ի՞նչպէս ընէր: Դպրո՞ցը... ուղ - դակի կը պահէր: Հիմա չըջապատ ու - նէր, հորիզոնը երթալով կը լայննար, միտքը տարածուն ծաղիկից դաշտի մը պէս օր - աուր կը բացուէր: Բայց այս վիճա՞կը, այս բարի խեղճ բնասանիքին վիճա՞կը ...:

Ինք ի՞նչ էր անոնց համար: Անոնք ի՞նչ էին իրեն համար: Ո՛չ իսկ հայրենակից, ոչ իսկ ծանօթ, բախտին մէկ անհասկնա - լի խաղը: Ու տանջանքը, խոր տանջանքը կը կրճատէր Աշուտին սիրտը, օր - աուր քիչ մը աւելի սաստիկութեամբ: Գիլերները անհանդիստ, յաճախ կը շտկուէր իր անկողինին մէջ, անձկու - թեամբ կը նայէր դէպի գիւղնք բաժնող դուրս եւ անոր ձեղքերէն կը նշմարէր ճրագին լոյսը: Ուրեմն այդ խեղճ կինը տակաւին արթուն էր: Տակաւին կը քած ա - սեղ կը քաշէր: Ժամը քանի՞ն էր հիմա: Մեղք չէ՞ր այդ անուական կնոջ:

Ո՛չ, պէտք էր աւելի երկարել այս ող - բերպութիւնը: Դպրոցը լաւ բան էր, այ - յո, — մանաւանդ բարձրագոյնը... Բայց կ'երևէ իրեն համար չէր, ինչ՞ու պէտք էր նահատակուէին այս մարդիկը իրեն - համար:

Եւ օր մը, գիշերանց կէս լսնիկի երկ - տոյթով, ելաւ անկողինէն ու գիլերուն մոտիկ հասնելու արթնացաւ:

Սիրաբիբին առջեւ: — Ո՛չ, ոչ, մայրիկ, այդ վիճակը ան - տանելի է, այս վիճակին հետ երբեք չեմ կրնար հաշտուիլ: Հարկիւր արժի անկող - անստապատ, դու գիշերանք միջնու ժա - մը երեք — չօրսերը կ'աշխատես, եւ ա - սիկա ամէն — տուր, ամէն երկույց, անկողինի - կ... վաղուրնի սկսեալ ալ դպրոցը վի - ջացած կը համարիմ ինձի համար, դր - ծիս կ'երթամ:

Այր ու կին իցուր փորձեցին տար - մոզել Աշուտը, որ բորբոքած, լայով կը խօսէր:

— Համբերէ, տղաս, շարունակէ դպրո - ցը, դու ոտքերնիս գերնգոմն հասնե - չէ, հարկաւ Աստուած բարի դուռ մը կը բանայ ...:

Բայց, Աշուտ այդ բոլորը չէր լսել:

ՄԻՍՏԱՔ - ՄԻՍՏՔ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Այլի Տիկին Մաննիկ Սարգիսեան և Տարսեան ընտանիքները կը ծանուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի այս Կիրակի առաւօտ (Սեպտ. 26) Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցին, 15 Րիւ ժան Կուժօն, իրենց մօր և մեծ մօր՝

ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ ՏԱՐՏԵԱՆԻ մահուան քառասունընթիւ առթիւ :

Կը հրաւիրուին ողբացեալին յիշատակը յարգողները :

ՆՈՒԷՐ ԿԱՊ. ԽԱՉԻ ԿԱՅԱՆԻՆ

Տէր և Տիկին Յովհաննէս Սարգիսեան փոխան ծաղկեպատակի կը նուիրեն յիսուն ֆրանք Կապոյտ Խաչի Օղափ. կայանին, Գեղամ Մելիքեանի մահուան առթիւ :

ՅԱԻԱԿՑՈՒԹԻՒՆ

Յ. Կ. Խաչի Փարիզի մասնաճիւղը իր անկեղծ ցաւակցութիւնները կը յայտնէ Տէր և Տիկին Մուշեղ և Մելքոն Պեռ - բոսեանի և իրենց ընտանեկան բոլոր պարագաներուն, Նիւ Եորքքանակ իրենց քննարկին՝ Նիքիթա Հարմանեանի անակընկալ և զանազան ժանտեան առթիւ :

ՆՈՒԷՐ

Այլի Տիկին Սիրանոյշ Ծերիկեանց և զաւակները իրենց ամուսնոյն և հօր՝ Գեղամ Ծերիկեանցի մահուան ճիշդ առ - բերդին առթիւ, յիսուն ֆր. կը նուիրեն Սէն - Ռաֆայէլի հանգստեան տան :

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Տէր և Տիկին Տ. Պահատուրեան, շր - նորահալաութիւն կը յայտնեն Լիոնի Հայ Կրօն. դասուն, Եկեղեցական և Ազգային, Ազգասիրտամի և Տիկինաց, Դպրաց և երգչախումբի վարչութեանց և անդամ - ներուն, ինչպէս նաև բոլոր անոնց, ո - րոնք զբաւոյր կամ անձամբ շնորհաբեր - ցին ամուսնութիւնը իրենց անդրանկի զաւակին Արքիւրի ընդ Օր. ՄԱՐԻՆԱ ՈՒՂՂՈՒՐԼԵԱՆԻ (Պէյրութէն), որ տե - ղի ունեցաւ Կիրակի, Սեպտեմբեր 19ին, Լիոնի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ :

ՓՈՒԱՆ ԾԱՂԿԵՊԱԱԿԻ

Այլի Տիկին Գրիսիին Գարայեան և Գ. Ժան Գարայեան կը նուիրեն 50 ֆր. ի նպաստ Հայ Կարմիր Նախի բարեկա - տակ ձեռնարկներուն, փոխան ծաղկեպատակի, Արմենուի Տարսեանի մահուան առթիւ :

Տէր և Տիկին Հասնայուսեան կը նուիրեն երեսուն ֆր., ի նպաստ Հայ Կար - միր Նախի Օղափ. կայանին, իրենց թոռ - նիկին ամուսնութեան առթիւ :

Պ. Ամիրխանեան կը նուիրէ քսան ֆր., ի նպաստ Հայ Կարմիր Նախի Օղափ. կայանին :

ՀԱՅԵՐԷՆԻ ԴԱՍՈՆԹԱՑՔՆԵՐԸ

Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցւոյ դիւանը կը ծանուցանէ, նոր ուսուցչա - կան կազմով և տեղական վերակալ - մուծ կրթ. մարմիններով, Հայաստան - եայց Առաջ. եկեղեցւոյ Փարիզի և շրջ - ջակայեց Կրօն. Ընկերակցութեան հովա - նաւորած հայերէնի Հինգշաբթի և Կի - րակի օրերու հետեւեալ զատնթացքները պիտի վերաբացուին Սեպտեմբեր 30, Հինգշաբթի օրուրնէ սկսեալ :

ՊԱՆԵՒՅԻՑ ԲԱՇԱՆ, 24 Րիւ Հայկ Դպրեան, Պանթօ :

ԱՒՅՈՐՎԻՒՄ, Տեղւոյն ֆրանսական վարժարանի սրահին մէջ,

ՅԱԹԻՑԻ, 22 Րիւ Վիքթոր Հիլօ, ժամբոյի :

ԱՌՆՈՒՎԻՒՄ, Եկեղեցւոյ կից սրահին մէջ, Կիրակնօրեայ վարժարան, եկեղեց - լոյ խորհրդարանին մէջ, Կիրակի ժամը 10 - 12 :

ՊՈՒԱ ՔՈՒՈՄՊ - ԱՆԻԷՆ, 4 Րիւ Մա - ռիլօր Պուա - Քոլոմպ :

ՇՍԻՒՄ, Եկեղեցւոյ կից սրահին մէջ : Կոչ կ'ուղղուի բոլոր հայրենակիցներ - ըուն և ծնողներուն որ հետաքրքրուին լրջօրէն իրենց հարազատներու զատաւ - րակութեան կենսական հարցով և ա - ուջնորդեն իրենց զաւակները վերոյիշ - եալ վայրերը և քաջակրօն կրթական մարմիններու գործունէութիւնը և ու - սուցչութիւնը :

ԿՈՒՉՈՒԻ

CONFECTION FEMININE
ENTREPRENEURS SPÉCIALISÉS
CORSAGES

tergal doubles, non coupés, grosses séries,
travail assuré toute l'année.

Etabl. HALIOT

24, Boulevard Saint-Denis, Paris (10^e)

ՎԵՐԱՄՈՒՏ

ԿՐԸՆՈՊԻՒՂ. — Կապ. Խաչի Կիրակնօր - եայ հայերէնի զատնթացքը տեղի կ'ու - նենայ Հոկտ. 3ին, Կիրակի առաւօտեան ժամը 9ին, Քոլուա - Ռուժի դպրոցի սր - բահին մէջ, զատաւ Պ. Իշխան Մար - տիրոսեան : Բոլոր ծնողներէն կը խնդրուի անխտիր արձանագրել իրենց զաւակները, իսկ քաղաքի համար զիմել 31 Ռիւ տ'Ալամպէտ, ընկերուհի Մի - քայլեանի ընկերանին մէջ :

ՏԵՍԻՆ. — Կապ. Խաչի դպրոցի 1965-66 տարեշրջանի արձանագրութիւնները տեղի կ'ունենան ամէն օր՝ զիմել Պ. Վ. Հիւ - եանի Ռիւ Նամսէն : Դասաւանդութիւնն - րը կը սկսին Հոկտ. 2ին :

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Ս. Սաչ Ընկերակցութեան տարեկան պարահանդէսը Փետրուար 27ին :

ՓԱՐԻՉԻ

ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՑ ՊԱՇՏԱՄՈՒՆԻՔ՝

ՃԱՄԸ 10,45ին

Այս Կիրակի կը խօսի՝

ՊՍ. ՍԻՍԼԵԱՆ

8 BIS, RUE DES TERNES

PARIS (17^e)

Métros : Porte Maillot ou Champéret

ՄԱՐՍԷՅԼԻ ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ

ՄԿՐՏՉԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Կիրակնօրեայ Պաշտամունք

Սէն Ժերմ, ժամը 9.30ին

MARSEILLE, 20 Rue Jemmapes

ժամը 10,45ին

Կը քարոզէ՝

ՎԵՐ. ՅԱՐԹ. ՀԵԼՎԱՃԵԱՆ

IMPRIMERIE SPÉCIALE
DU JOURNAL « HARATCH »
33, Rue de Trévise, PARIS (9^e)

ՎԵՐԱՄՈՒՏԻ ԱՌԱՋԻՆ

ՊԱՐԱՆՑԻԿ ԵՐԵԿՈՅԹԸ

Կազմակերպութեամբ Հ. Յ. Գ. Նոր Սե բուրդի « Արծի » ակումբին

Շարաթ, Սեպտեմբեր 25, ժամը 18էն մինչեւ լոյս

SALLE FRANCO-SUISSE

10, Rue des Messageries, PARIS (10e)

Métro Poissonnière

ՀԱՃՅԼԻ ՄԹՆՈՂՈՐՏ

BAR — — BUFFET

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ԳԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ 75ԱՄԵԱԿԸ

Կը ստուի 30 Հոկտեմբեր, Շարաթ գի - շեր ժամը 21էն մինչեւ լոյս, վեցերորդ թաղամասի քաղաքապետարանի սրահնե - րուն մէջ :

X

ԼԻՈՆ. — Հ. Յ. Դանակցութեան 75 - ամեակը կը ստուի 31 Հոկտեմբեր, Կի - րակի կէսօրէ ետք, ժամը 16էն ուշ գի - շեր, Ազգային Տան սրահ :

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԿԱՊ. ԽԱՉԻ Մարտիլի միջմասնաճիւ - դային ժողովը այս Շարաթ ժամը 15ին, Ահարոնեան ակումբը : Խիստ կարեւոր օ - րակարգ : Շրջանի վարչութեան բոլոր ըն - բուհներուն ներկայութիւնը պարտաւո - բէն է :

ՀԱՄԱՆԱՐԲ. Միութեան Մարտիլի ժո - ղովը այս Շարաթ, ժամը 21ին, սովորա - կան հաւաքատեղին : Օրակարգ. — Ա) Ձեկուցում պատգմ. ժողովի : Բ) Ընա - ռութիւն նոր վարչութեան : Ընթացիկ հարցեր : Կը խնդրուի բոլոր անդամնե - րէն ներկայ ըլլալ այս տարեշրջանի ա - ուջնի ժողովին :

ՀԱՍՏԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

Կը յիշեցնենք մեր բաժանորդներուն թէ հասցէի փոփոխութեան համար պէտք է անպայման զրկել ինչ հասցէն և Երեք ֆրանք :

ԱՂՔԱՏԱԽՆԱՄԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԵՍԸ

ԿԻՐԱԿԻ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 24ԻՆ

ԺԱՄԸ 16ԷՆ ԿԵՍ ԳԻՇԵՐ

GEORGE V, Avenue George V, Paris

Եղանակին առաջին պարահանդէսը Մանրամասնութիւնները յետադալին

ԼՈՅՍԸ ԳՈՅՆ Է... ԳՈՅՆԸ ԼՈՅՍ Է
ՁԵՐ ՏԱՆԸ ԼՈՅՍ ՏՈՒԷ՛Ք... ԹՈՄԼԱԿԻ ԳՈՅՆ ՏՈՒԷ՛Ք
Ձեր բնակարանը կը լուսաւորուի
Եթէ ներսը եւ դուրսը
ՎԵՐԱՆՈՐՈԳԷ՛Ք - ՋՐԻԿԱՐԷ՛Ք - ՆԵՐԿԷ՛Ք
ԹՈՄԼԱԿ ՀԱՍՏԱՑՈՒԹԵԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐՈՎ
PEINTURES THOMLAC
16 bis, Bd. Sébastopol, Paris 4e
Tél. ARC 26-61 - Métro : Halles et Chatelet
136, RUE DES BOURGUIGNONS — ASNIERES - BOIS COLOMBES (Seine)
Tél : GRE. 09-47
11, BD. DE LA REPUBLIQUE — LA GARENNE (Seine)
Tél. : STA. 19-06
ԱՆՄՐՑՆԵԼԻ ԳԻՆԵՐՈՎ
Ամէնէն արդիական, նուրբ և ընտիր ճաշակով պատրաստուած՝ առաջնա - կարգ ներկեր : Բնական և արուեստական բազմերանց գոյներու մեծ ընտրու - թիւն : Նորոյթ իզաներկեր, պատի գեղեցիկ թուղթերու ճոխ ընտրութիւն : Գեանի համար՝ ամէն տեսակ — լինուլտ և փլասթիֆ — ծածկոցներ :
ՏԱԻՖԼԵՍ — ՏԱԻՍՈՄ — ՇԱՐՔԵՏԵ
Ձեր բնակարաններուն արտաքին և ներքին խնամքներուն համար անհրաժեշտ բոլոր նիւթերը :
Ամէն գնորդի կը նուիրուի յատուկ տեսարակ մը, որտ շնորհիւ կրնայ 10-30 առ հարիւր զեղք ունենալ :
ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ
52, RUE CHALON, PARIS 12^e 64, BLD. DE BELLEVILLE, PARIS 20^e
166, AV. ARISTIDE BRIAND PAVILLONS - SOUS-BOIS (Seine)
4 bis, RUE PAUL VAILLANT COUTURIER — ARGENTEUIL (S. et O.)
24, RUE PAUL VAILLANT-COUTURIER — ALFORTVILLE (Seine)
48 bis, RUE DALAVRAC — FONTENAY - SOUS - BOIS (Seine)



ՕՐՈՒԱՆ ԴԵՊՔԵՐԸ

ՁԱԽԻՆ ԹԵԿՆԱԾՈՒՆ՝ ՄԻԹՐԱՆ

ՀԱՄԱՅՆԱՎԱՐՆԵՐԸ ՔՈՒԷ ՊԻՏԻ ՏԱՆ

Տրանսիի քաղաքապետարանին մէջ, համայնաւար կուսակցութեան Կ. Կոմիտէի ներկայ նիստէ մը ետք, վաւերացուց վայրէջք Ռոշէի տեղեկագիրը եւ որոշեց իր քուէները կեդրոնացնել, Հանրապետութեան նախագահութեան նոր թեկնածու Ֆրանսուա Միթրանի վրայ :

1919 Յուլիս 23ին Մուսթաֆա Բեմալ էրզրումի մէջ գումարեց առաջին համագումարը, ուր միաձայնութեամբ եւ ծափերով քուէարկուեցաւ Միսաք Միլլին (Ազգային Ուխտ) :

Առաջին յօդուածով կը շեշտուէր, որ « Արեւելեան ցաւակները, Տրապիզոնի վիլայեթին եւ ձաղիկի (Սամսոն) շրջանին հետ ամբողջական մասը կը կազմեն օսմանեան կայսրութեան : Այդ ցաւակները եւ իր կազմակերպիչները եւ արեւմտեան համայնութեան իրաւունքները կ'ընդունուին անմիջապէս » :

Երկրորդ յօդուածով կ'ըսուէր թէ օտար պետութեանց կողմէ Հայերուն եւ Յոյներուն ի նպաստ կատարուելիք գրաւման կամ միջամտութեան փորձերուն պիտի դիմագրեն իրենց ամբողջ ուժերով :

1919 Սեպտեմբեր 1ին Սիլվաի մէջ կառուցուեց քաղաքացիական երկրորդ համագումարը, ուր քուէարկուեց քանաձեւերուն երրորդ կէտը կը շեշտուէր :

« Մէկ քիզ հող իսկ պիտի չտանք Հայաստանի կամ ուրիշ օտար պետութեան մը : Մուսուլի հարաւեցն սահմանազիծ մը պիտի փաշուի ուղղակի մինչեւ Ալեքսանդրէթ (Խաֆէնտերուն) : Այս գիծէն հիւսիս մնացած ամբողջ հողամասը պիտի մնայ օսմ. կայսրութեան : Այս հողամասէն կտար մը իսկ չեմք կրնար ձգել օտար տիրապետութեան տակ : Երդուրեցած ենք շարունակել զինեալ դիմադրութիւնը մինչեւ այս սրբոյն ամբողջական գործադրուի » :

Յետոյ երրորդական պետութիւններէն կը պահանջուէր պարզել իրքերի, Ատանայի եւ այլ նահանգները եւ անմիջապէս քաշել գրաւման զօրախումբերը կայսրութեան միւս մասերէն :

Հակառակ Ազգային Ուխտի այն յտակարարութեան, որ կը հրաժարին Արեւմտեանը թէն եւ անկէ հարաւ դառնուած հողամասերէն, իր մէջ ինչոնիւ կտուր անդրաֆրանսական դաշնակիցներէն նըւէր պիտի ստանար Արեւմտեանը Սան Տաքն ու Անտիոքը՝ Սուէտիոյ շրջանով : Այսինքն հիւսիսէն վերջ նաեւ հարաւի հայրենակ շրջանները եւ նոր բռնադատութի պիտի ենթարկուէին Մուսա Լեւան հերոս գաւակները, Պուրքին լքելով իրենց հայրենի տուները :

Դժբախտ ճակատագիր : ՀԻՍՆՑ-ՍԱՄՈՒԷԼ

նի, դուրս կ'ելլէ իր կողմացումէն : Չի խօսուի « Ժողովրդական ճակատ » մասին, թէ եւ համայնաւարները չեն վարանիր յայտարարել թէ ընկերավարականներու եւ համայնաւարներու միասնաբար տուած քուէները մեծ նշանակութիւն պիտի ունենան քաղաքական յեղաշրջումին վրայ, քուէարկութեան կողմէ :

Կ. Կոմիտէի բանաձեւը կը շեշտէ թէ ամբողջութեամբ կը վաւերացնէ քաղաքական Բիւրոյի տեղեկագիրը զոր ներկայացուցած է վայրէջք Ռոշէ : Եօթը տարի է վեր գրամատիքական մենաշնորհներու իշխանութիւնը ի դորդ դրաւ, յետագիծական ուժերու, Փինէի անկախներու եւ Ժողովրդական Ծարձումին օժանդակութեամբ, ամէնէն յետագարձ ընկերային եւ անտեսական քաղաքականութիւնը զոր Ֆրանսա ճանչցած է քան տարի է վեր : Անհատական իշխանութիւնը վնասեց ազգին ժողովրդավար կեանքին, բոլոր ձեւերով :

Բանաձեւը յիշեցնէր էտք թէ ինչ զիրք բռնած է համայնաւար կուսակցութիւնը, 1963 Դեկտեմբեր 24ին երբ յայտարարուեցաւ նախագահական ընտրութիւնը, կը ճշդէ թէ նոր կացութիւն մը ստեղծուած է : Միթրան, թեկնածու Հանրապետութեան նախագահութեան, հրապարակաւ պարզելով իր ճրագիրը, հաստատեց ընդդիմութիւնը զոր ցոյց կուտայ 1958էն ի վեր, ներկայ վարչաձեւին : Յայտնեց թէ կողման Մահաւանդութեան վերաբնութիւնը կ'ուզէ : Կ'ուզէ ջնջել այն յօդուածները որոնք կը նուիրուր ձեռն անհատական իշխանութիւնը : Բանաձեւը կը շեշտէ նաեւ թէ քուէարկելով Ֆ. Միթրանի համար, համայնաւար, ընկերավարական եւ այլ դեմոկրատներ նոր եւ ծանր հարուած մը կը բերեն մենաշնորհներու իշխանութեան :

« Համայնաւար պաշտօնակիրները իմանիք խիստ յօդուած հրատարակած է հառաւոր Տէփրէօյի ղեկ, որ քննադատած էր Ֆրանսուա Միթրանը : Փե - էս - Իւր քաղաքացիական դրած էր ի մէջ այլոց : « Երբ համայնաւար կուսակցութիւնը կը սխալուի - ցոյց տուինք Ալթերիոյ պատերազմին ընթացքին - լաւ է իրեն հետ սխալիք » :

Այս խօսքին, իմանիք կը պատասխանէ. « Եթէ Տէփրէօ զատ ունի տալիք, թող իր իսկ կուսակցութեան տայ » :

« Համայնաւար ուսանողները կը բողոքեն Միթրանի թեկնածութեան ղեկ « տասնութէկ անգամ նախարար, Դ. Հանրապետութեան օրով եւ մեծ կողմնակից Ֆրանսական Արեւելայի, խորհրդանշան քաղաքական այն անցեալին զոր բռնութեան զասը կատէ » :

ԱՄԵՐԻԿԱ՝ ԴԵՄ ՓԵՔԻՆԻ ՄՈՒՏՔԻՆ, ՄԱԿԻ ՄԵՋ

ՄԱԿի ամերիկեան պատուիրակը շատ խիստ լեզուով ղեկ արտայայտուեցաւ Չինաստանի անդամակցութեան : Միացեալ Ազգիները, շեշտեց Կողմերի, պէտք է մերժեն անդամակցութիւնը վարչաձեւի մը որ ղեկ է խաղաղութեան :

Անդրադառնալով Վիէթնամի պատերազմին, Կոլապիզի շեշտեց. « Մեր նպատակները պարզ են Հարաւային Վիէթնամի մէջ : Կ'ուզենք միայն Վիէթնամի անկախութիւնը ապահովել, անոր պաշտպանութիւնը յարձակմանը ղեկ եւ կարելիութիւնը անոր ժողովուրդին որ ինք որոշէ իր ճակատագրը : Միացեալ Նահանգները պատրաստ են քաշելու իրենց զօրքը երբ համայնաւար յարձակումը զաղրի եւ հարաւային Վիէթնամը ազատ ըլլայ որոշելու իր ճակատագիրը, հիմնուած ինքնուրոշման սկզբունքներուն վրայ : Ամէն բանէ առաջ խաղաղ լուծում մը կը փնտռենք : Բանիցս շեշտեցինք մեր փափաքը խօսակցութիւններ ունենալու եւ այսօր, հոս կը կրկնեմ այդ փափաքը » :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

Փեքինի « Ժողովուրդին Օրաթերթը » կը գրէ թէ Չինաստանի սահմանային տարակարծութիւնները Հնդկաստանի հետ, չեն կարգադրուած : « Հարցը հետու է լուծուած ըլլալէ » կը շեշտէ թերթը :

ՆՈՐ ՏԵԼՀԻԻ մէջ, հարիւր հնդիկ երեսփոխաններ հիւլէական ղէնք շինել կ'ուզեն, « Ղառն փորձառութեան » մը դասեր քաղելով :

ՄՈՍԿՈՒՍԻ Պրաւդան կը գրէ թէ Ատլանտեան Ուխտի երկիրները չեն ուզեր տպադրուած կատարել : « Ժամանակի կորուստ » են համայնաւար կուսակցական պաշտօնակիրները համար, Ժրնեւի ժողովները :

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳԵՐՄԱՆԻԱ ընդունեցաւ 25 միլիոն տոլարի փոխառութիւն մը ընել Սուբիոյ, զանազան ծրագիրներու իրագործման համար :

ԱԹԷՆՔԻ խորհրդարանին վերջին նիստը կրկին շատ փոթորկալից եղած է : Կը թուի թէ ամէն մարդ Սթեֆանօպոլսի լուստեսութիւնը չունի ինչ կը վերաբերէ վստահութեան քուէին :

ԼԷՈՓՈՍՎԻԼԵՆ կը հաղորդեն թէ մահափորձ մը ձախողած է Չոմպէի ղեկ : Երկու հողի փորձած են զայն սպաննել երբ Փուլթալի մրցումէն մը զուրս կ'ելլէր :

ԴԵՐԱՍԱՆ Շառլ Պուայէի տղան՝ Չատրեկան մեռած է խորհրդաւոր պայմաններու մէջ : Յայտնի չէ թէ անձնասպան եղած է թէ արկածով ղէնք պարպած է գանդին մէջ : Շառլ Պուայէ, որ Փարիզ էր, անմիջապէս Լոս - Անճելոս մեկնած է :

ՓԱՔԻՍՏԱՆԻ նախագահը՝ Ալուայ Խան Մեծն Բրիտանիա պիտի այցելէ ի մօտոյ : Լոնտոն կը հասնի Հոկտեմբեր 19ին եւ պիտի մնայ 17 օր :

ԻՍՐԱԵԼԻ Արտաքին նախարարը՝ Տրեկին Կոլտա Մէյր Լոնտոնէն անցնելով, տեսակցութիւն մը ունեցած է վարչապետ Ուլմերին հետ :

ԹՈՒՆԻՍԻՆ մէջ տեսութեան կուսակցութեան պաշտօնակիրները՝ Ալ Աւալ « մահափորձ կը քաղաքներու » ստորապետութեամբ ծանր յարձակում մը հրատարակած է Գահրիէի վարչաձեւին ղեկ :

ԱԼԺԵՐԻՆՑ մէջ ծառայած զինուորներ, կը կրկին անգամ նախկին օտար թերթերը կը պահանջեն :

ԹԵԼ - ԱՎԻՎԻ մէջ, վարչապետ էջըզ յայտարարեց « Արաբ պետութիւնները սկսան ճանչնալ խորհրդային իրողութիւնը : Միջին Արեւելքը միայն իսրայէլի համար չէ որ գոյութիւն ունի, այլ եւ շրջանի բոլոր ժողովուրդներուն համար եւ միայն զորձակցութիւնն է այդ ժողովուրդներու միջեւ որ կրնայ պահպանել Միջին Արեւելքի գերիշխանութիւնը, արաբ կամ ոչ : Մեր քաղաքականութիւնը ուրեմն երկու երեսով ունի - մեր երկիրը, մեր ժողովուրդը, մեր սահմանները, մեր ջուրերը պաշտպանել, առանց վարանումի, բայց ոչ մէկ ճիգ խնայել համակցութիւնը յոստանացնելու համար, օր մը խաղաղութիւն հաստատուելու նպատակով » :

ԱՄԵՐԻԿԱՆ ԴԵՐԱՎՈՐՈՒՄ փաւերացուց այն օրինակներ որ կը ջնջէ Բոքայի դրութիւնը ներկայիս համար : Բոքալի ի դուրս էր Ա1 տարիէ ի վեր, կը ջնջուի ձոնարնի առաջարկով բայց նոր օրինակներ կը սահմանափակ տարեկան 120 հարարի, Ամերիկայի միւս երկիրներէն ներկայիցներու թիւը :

ԴԱՄԱՍԿՈՍԵՆ կը հաղորդեն թէ Ամին Էլ Հաֆէզ իր կառավարութեան հրահրապարակեց ներկայացուցած է : Նոր դատաւիճը կարգած է Տոքթ. Չուայէն, որու մէջ հինգ նորեր կան եւ 17 հինգեր :

ԴԱՐՄԱՒՈՐ ՏԱՌԱՊԱՆՔ

Ա.

Բիւզանդիոնի Եկեղեցիին ամէնէն պերճախօս քարոզիչը՝ Յովհան Ոսկեբերան (347 - 407), կը գրէր. «Քաւարացիները յարձակեցան Հայաստանի թշուառ բնակիչներուն վրայ եւ լափեցին զանոնք: Ամենուրեք խոռոք եւ անկարգութիւն, հարբուաւոր մարդ, կին, տղայ կոտորուեցան, զիւր եւ զիւրաքաղաք ամայացած են, ամէն կողմ արիւն եւ աւեր, ամէն կողմ կը լսուի մահաձայններու հնչողիւնը, յաղթողներու ուրախութեան կանչը, յաղթուածներու հեծկտուքն ու հոտաշանքը»:

Ոսկեբերանի քանի մը տողեր կը խոսքընեն Հայուն դարաւոր տառապանքը, տարագրութիւն, կոտորած: Հայ պատմաբաններու գրութիւնները երեմիականներ են: Դէպքերը կը յարգեն պարբերաբար՝ ընկերացած բնական աղէտներու, համաճարակի, երկրաշարժի, սովերու: Հինը կը մոռցուի՝ երբ նոր աղէտ մը կը պատահի, ամէն անգամ անէճճ պիտի կորուցանուի, բայց նոր յոյսեր պիտի արթնան լաւագոյն օրերու, նոր խարհանքներու առջև գտնուելու համար: Ծառեր պիտի լքեն բնագաւառ անդորութիւն գտնուելու համար, պիտի մաշին օտար հորիզոններու տակ, պիտի մոռնան լեզու եւ հայրենիք առանց լաւագոյն օրեր տեսնելու:

Առաջին տարագրութիւնը կը կատարուի Ծաղուհի ձեռքով, քառասուն հարիւր ընտանիքներ բռնի կը փոխադրուին Պարսկաստան, մեծ թիւ մը ժամանակին համար, զիւրերը կը դատարկուին, տարագրուածները կը ձուլուին եւ օր մը պիտի դառնան թշնամի հեռաւոր հայրենակիցներուն: Այդպէս պիտի պատահի կամաւոր եւ ակամայ բիւզանդական սահմաններն անցնողներուն: Բիւզանդիոնի քաղաքականութիւնն էր, ուստի պատմաբան ՎաղիլէՖի համաձայն, Սլաւները Փոքր Ասիա, Հայերը թրակիա փոխադրել:

Մորիկ կայսր 578ին մեծ թիւով Հայեր կը փոխադրէ Կիպրոս՝ կանխելու համար քաղաքական շարժումները: Բիւզանդական բանակը 688ին կ'աւերէ 25 գաւառներ եւ ութ հազար ընտանիք Բիւզանդիոն փոխադրելով՝ կը վաճառէ: Ծաղուցիթիւն մըն է Խալիֆին համար, որովհետեւ Արարները կը դրաւեն լքուած վայրերը: Բնակչութեան թիւը կը նուազի բնիկներէն, օտարներուն թիւը կ'աւելնայ: Արարը կ'առաջարկէ Յուստինիանոս Բ. ի Հայերը փոխադրել Թրակիա, Փոքր Ասիա: Հայագի Վարդան Փիլիկ (711-13) կը դործադրէ արար բաղձանքը՝ մեծ թիւով Հայեր փոխադրելով Պալքանները: Կոստանդին Ե. կը քանդէ Կարբնը (751), որ արեւմտեան Հայաստանի ամէն

նէն մեծ քաղաքն էր, յաջորդ տարին Արարները կուզան, կը վերանորոգեն քաղաքը եւ Արարները կը տեղաւորեն:

Թէտփիլոս կայսրն ալ կը տարագրէ բաղձաբիւ ընտանիքներ, երկիրը կը դառնայ անապատ:

Բիւզանդական բանակը կը քաշուի դեմապրելով, արարականը կուզայ քանդելու համար:

Տիրոնն ու Բիւզանդիոն, Պաղտատ ու Բիւզանդիոն իրարմէ կը խեն Հայաստանը, միշտ մահ ու աւեր սիրելով, կոտորած եւ տարագրութիւն կատարելով, երկիրը դատարկելու նպատակով:

Յովհաննէս պատմաբան կաթողիկոսի գիրքը ողբերգութիւն մըն է արիւնով ու արցունքով խմբադրուած: « Արարները պարան կը ձգէին վրին եւ ոտքերուն, կը բաշէին մինչեւ մարմինն բաժանուի: Կը կտրէին մատներ, ախանջ, քիթ, կը ճնշէին ոտքերուն կոճղերը: Երեւելի այրեր եւ կիներ, մատաղ մանուկներ գտնուելի պէս կը մորթէին, ուրիշներ կը վաճառէին, մայրերէն կը խլէին ստինքի երախաներ եւ կը նետէին դետին: Ոմանց լեարզը կը հանէին, որովայնը կը բանային: Կիներ թոյն կը խմէին անարգանքէ պաշտելու համար: Հաւատարացութիւն կ'առաջարկէին, բայց կը հռչակէին թէ քրիստոնէսէն ենք: (Էջեր 310-14):»

Կոտորածին կ'ընկերանայ ահաւոր սովը: Անդրտակցաբար մոլելիւնը եւ այլ բոյսեր կ'ուտէին եւ կը մահանային, ոչինչ զնով կը վաճառէին իրենց սիրասուն դաւազները, կիներ մերկանում կը շրջէին մուրացիկ եւ ծուրած կ'անցնէին: Եղան մայրեր ու հայրեր, որոնք կերան իրենց զաւակները: «Կերան շուն ու կատու, խորովեցին տղայ եւ աղջիկ եւ յետոյ ուտողներն ալ մեռան»:

Աղէտներու ատեն բարոյական մակարդակը կը ցածնայ: Անհատը ինքնապահպանման ընդդէմ անձը միայն կը մտածէ, հայրը կը մոռնայ որդիներուն գութը, մայրը նորածին մանուկներուն սէրը:

Արար աւազակներ իրարու կը յաջորդեն, կը կողպարեն, կը տանջեն, կը կոտորեն, կը մեկնին: Յովհաննէս հերոսական կուրսերը կը մղեն, կը կեղեքուին, կը մահան անյողզող: Հայ նախարարներ հրոսակային կուրսերով կը դիմադրեն բուսակալութեան, բայց չկայ հաւաքական միութիւն, ընդհակառակն իշխան իշխանի գէթ է միեւնոյն ատեն, սրտի խորունկ մորմոքումով պատմաբանը կը գրէ. « Հայեր Հայերու դէմ համագունդ ի կուրս կ'առաջարկէին, թշնամիէն աւելի իրարու արիւն կը հեղուին, իրարու տունը կը քանդէին»:

Արարներուն կը յաջորդեն Սելուզները, կը քանդեն Կարբնի մօտ մեծափարթամ Արծն քաղաքը կը փոխադրեն տասը հազար սայլ սար: Քաղաքը սեփական զօրք ունէր, ինքնավար էր, բայց անկարող կը լլայս դիմադրելու վայրենի վստմակին: Մատթէոս, յիշելով Տուրքերի

ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Թէ անծառք ես այս ժողովրդին՝ նայիր այս որքին ...

Նա բախտակիցն է իմ ժողովրդի, Հասակակից է իմ ժողովրդի: Գ. ԷՄԻՆ

Հետազոտութիւնները ցոյց կուտան, որ հայկական լեռնաշխարհը եղած է հողագործութեան համաշխարհային հին օճախներէն մէկը: Տարեկրներուն եւ պատմաբաններուն վկայութեամբ ատեն մը ամբողջ Արարատեան հարթավայրը ծածկուած էր խաղողի եւ պտուղներու այգիներով: Խաղողին բազմապարսեան մշակումը երկրին մէջ հասած էր այսպիսի բարձր մակարդակի մը, որ շատ հետադարձներ խաղողին նախահայրերից կը համարէին Հայաստանը: Եւ այդ՝ գուրդի չէ ճշմարտութենէ: Կարմիր Բլուրի պտուղները կը վկայեն այն մասին, որ դեռ մեր թուականէն առաջ 10րդ դարուն Հայաստան ունեցած է զարգացած այգեգործութիւն եւ գինեգործութիւն: Այո, Հայաստանի այգեգործութիւնը դարերու խորքին կուզայ, մերթ ծաղկած, մերթ ամբողջութիւնն ոչնչացած:

Հայաստանի այգեգործութեան բարձր մշակումը մասին կը խօսին նաեւ ոտոյ ման քաղմաթիւ կոտորուածներուն՝ ջրամբարներուն, ջրանցքներուն, արուեստական լիճերուն եւ փապուղիներուն հետքերը, որոնք կ'առուցուած էին պատմական Հայաստանի, Արարատ, Տուրուբերան, Վասպուրական, Սիւնիք եւ այլ գաւառներու մէջ:

Թ.Ք. դարու վերջերը Հայաստանի այգիներուն տարածութիւնը ընդամէնը կը կազմէր 7 - 7.5 հազար հեկտար, իսկ 1913ին՝ 9.2 հազար հեկտար: 1918-20 թուրքերը երկու անգամ նորէն աւերեցին Հայաստանի գինեգործութեան մարդարիւր՝ Արարատեան դաշտը:

Այգեգործութեան զարգացումը առաւել մեծ թափ ստացաւ վերջին տասնամեակի ընթացքին: Ներկայիս Հայաստանի կողմէ քաղաքին զբաւումը, կ'աւելցնէ. «Լալով յիշելու եմ փառաւոր կիններու դերակարգութիւնը տղոց հետ դէպի Պարսից աշխարհը: Կը տանէին զանոնք երամեակ, որպէս բաղմութիւն թռչուններու»: Կուզայ Արարատին, գերի կը տանի «անհամար մանուկներ եւ աղջիկներ»:

Սենեքերիմ կը լքէ գաւառը, 72 բերդ, չորս հազար զիւր, ութ քաղաք, կը մեկնի Սլավո: «Բիւզանդիոն վերցնելով Հայ ուժը, զրկուեցաւ պաշտպան ուժէն, անտէր մնալով երկիրը՝ Սելուզները ճամբայ գտան»: (Ուսեպեյեցի, էջ 135-136): ԽՈՐԷՆ ԳԱՒԻԿԵԱՆ (1 Ծար.)

այգիներու տարածութիւնը կը կազմէ մօտուորապէս 36.5 հազար հեկտար:

Հայաստանը լեռնաշխարհ է, ճիւղապատ լեռներով, խոր ճորերով ու կիրճերով, ընդհանրապէս տարածաբար վերահսկող, աչքի կը զարնէ իր հողակլմայական պայմաններու եւ բուսական ծածկոցին խիստ բազմազանութեամբ: Բնական է, որ այս դանդաղութիւնը երկիրին է գրած նաեւ այգեգործութեան վրայ:

Որքատունկը Հայաստանի մէջ կը մշակուի մակերեսին 400 - 1500 մէթր բարձրութեան վրայ, երբեմն եւ աւելի բարձր վայրերու մէջ: Այգեգործութիւնը համեմատաբար աւելի զարգացած է երկրին հարաւային շրջաններուն, Արարատեան գոգհատովին մէջ, ուր Ֆիլրքսեան չէ չէր փոխվելու նպատակով պայմաններ կը ստեղծէ խաղողին մշակումին համար: Հոս կ'իման չոր է, ցամաքային, իսկ անձրեւներու տարեկան քանակը չորը երեք հարիւր մ. մ.: Չման ստանաւորները երբեմն կը հասնին 33 աստիճանի, իսկ առաւելագոյն ջերմութիւնը չոր է մէջ + 41 աստիճանի: Չնայ որ անսնամանիքներէն պաշտպանելու համար անհրաժեշտ է այգիները ծածկել:

Քանի մը խօսք Հայաստանի մէջ մը չափուող խաղողի տեսակներուն մասին: Թողովրդական ընտրութիւնը զարբերութեանը ստեղծած է տեղական պայմաններուն յարմարող բարձրաբերութեան մը տեսակներ: Ոսկեհատի, որ ամէնէն աւելի տարածուածն է, կ'աւելի մարառակի, էջմիածին, Արովանի, թալիներ շրջաններու քարքարու կրային հողերու վրայ: Կուտայ բարձր եւ կայուն բերք:

Իր տարածութեամբ երկրորդ տեղը կը զբաղէ կախիթ տեսակը: Կը մշակուի Արարատի եւ Վեդիի շրջաններուն մէջ, կը նկատուի Հայաստանի ամէնէն բերքաւոր տեսակը: Կախիթէն կը պատրաստուին անգանի կարմիր բարձրորակ գինիներ, ինչպէս նաեւ քաղցր գինիներ եւ շունակներ: Մոխրադի տեսակը շատ շրջաններու մէջ տարածուած է, ասիական հիմնական մէջ կը մշակուի Արարատի եւ Վեդիի մէջ: Կուտայ բարձր եւ կայուն բերք Այս տեսակէն կը պատրաստուին սեղանի թեթեւ գինիներ եւ բարձր որակի շունակներ: Գառան դմակը Հոկտեմբերի անգանի շրջանի հիմնական տեսակն է: Կուտայ բարձր բերք: Յամբողջի վայրերուն մէջ այս տեսակէն կը ստացուի սեղանի թեթեւ գինիներ, իսկ նախալեռնային շրջաններուն մէջ սեղանի թեթեւ գինիներ:

Արեւիկա Եղեգնաձորի շրջանի յատուկ տեսակն է: Հիւսիսային Արեւելեան շրջաններուն մէջ՝ Նոյնմերեանի եւ Գուրգարի մէջ շատ տարածուած տեսակ է Լայկատիւնը, որմէ կը պատրաստուի սեղանի թեթեւ գինիներ: Լուրջ քաղաքային արձանագրուած է նաեւ այգեգործութեան գիտութեան ասպարէզին մէջ: Հայ գինեգործութեան ասպարէզին մէջ:

ՈՐԳԵԳԻՐԸ

Քիչ մը հանդարտած՝ վերադարձաւ անկողին: Այր ու կին նստան դէմ դիմաց: Ինչ ընէին, իրօք իրենց ընտանեկան, - նիւթական, - վիճակը ասած էր սեղ մը, անկէ անդին շատ դժուար էր թիափարելը: Բայց այս տղան ուշիմ, յատուապէս տղայ էր, ապագայ խոստացող աղայ էր, մեղք չէր կէս ճամբան թողուլ:

Բայց ինչ ընէին, հինգ զարոցական, հինգն ալ իրենց արդար իրաւունքով: Անդրտակ կեանքին եւ իրենց ծնողքին նիւթական զրութեան, յաճախ անմեղ արտունջներ, թեթեւ դանդաղաներ կ'ընէին այս կամ այն զրկանքներու չորքը: - Ուրիշները «սինեմա» կ'երթան, մենք անոր երեսը տեսած չուներք:

- Այս ինչ է, մայրիկ, ամիսը մէկ անգամ միտի երես չենք տեսներ: - Կօշիկներս «Ապուհասան»ին կօշիկները դարձնել են... Եւ այսպէս շարունակ անմեղ, հասկեր նալի արտունջներ... Այս անմեղ արտունջները, սակայն, ամէնէն շատ կ'աղբիւն Աշտարի վրայ:

Այս, այս, ինքն էր պատճառը այս բոլոր դժբախտութեանց ու զրկանքներուն: Ինք իր անբախտ վիճակովը այս տունին ալ զժբախտութիւն բերաւ, այսպէս կը արբամբանէր դառնօրէն:

Իրենց իրական վիճակին անտեղեակ մարդիկ, մանաւանդ անխոստափելի շարախօսները, զանազան մեկնութիւններով, երեւակայական ենթադրութիւններով հրապարակը կ'աղմկէին:

- Եթէ չուներն, ի՞նչպէս հինգ հոգի կ'ընեն զարոց զրկուլ:

- Պ. Վարդան... Հոգ մի ընէք, անիկ «ճամբար քեռ»ով եկած է...

«... Տիկին Սիրարփին... Միտի նարները զայն տարներու մէջ կը լողացնեն»... «Անոնց ունեցածը այս քաղաքին մէջ սեւ Հայ ընտանիք չուներ»...

Եւ այսպէս դեռ հազար ու մէկ շարախօսութիւններ այն անբախտ ընտանիքին շուրջ, որ իրօք անտանի վիճակի մը զպատարաւորած էին պարզ անոր համար որ շատ բարեւէր ընտանիք մըն էին:

Յաջորդ օրը, ստաւոտուն կանուխ, Աշտար ելաւ, գործի յատուկ հապուստները հապու եւ առանց նախաձայ ընելու գործի գնաց: Իզուր անցան բոլոր թեւազրութիւնները, աղաչանքները նոյնիսկ Տիկին Սիրարփիին արցունքները:

Իրիկուներ տուն վերադարձաւ քիչ մը կայի երեսով, բայց կարծես գոհունակ:

- Հոգ մի ընէք, պատասխանեց անոնց

առարկութիւններուն, եթէ ապագային բան մը պիտի ըլլամ, անպայման կ'ըլլամ: Կամքին առջև երկաթն անգամ կը հալի...

- Բայց տղաս, բայց մանչս... - Բայց - մայց չկայ, աս սո է: Հիմա օրհնեալ դեմոնիմոնը բերած եմ, միտ բերած եմ, դեհ շատոնց է միտ երես տեսած չուներք: Ես, նայի՛ Յակոբիկ, տես քեզի ալ ինչ բերի: Ի՞նչ է, Սոսէ, կը նախանձի՞ս կըբորդ, ահա քու բաժինըդ ալ:

Ու մէկուն տուա նաչխուն, աղուսրիկ զնդակ մը, միւսին ալ օրիորդներու յատուկ ձեռագործի տուի մը:

Տնեցիները բոլորը պիւր - պիւր կը զեւտէին այս բոլորը, եւ իրենց միտքին մէջ չէին կրնար հաշիւ տալ: Այսքան բան մէկ օրուան մէջ, այս ո՞ր տեղէն... կը մտածէին կասկածաւոր:

Բայց, տղաս մէկ օր աշխատեցար, օրաօրաբար քառասունհարկով բերիր, այս միւսինը որ օրեկէն... հարցուց Պ. Վարդան կասկածելի չեւտով մը:

- Հոգ մի ընէր, հայրիկ, որքին ձեւք երկար է, կ'ըսեն, բայց հաւատաւ, անոնք լաւ բաներու համար երկար են: Ըստ էութեան մանրամասն կը պատմեմ այս օրուան անակնկալները:

Տիկին Սիրարփին սկսաւ կերակուր պատրաստել: Սօսն կ'օգնէր անոր: Աշտար, որ անոնց մօտ կանգնած էր, մտե-

ցաւ ու բաներ մը փոփոսաց Տիկին Սիրարփիին ականջին:

- Բոստոմ, ձագս, զնա շիւք մը բեր մտալ թող այսօր հայրիկին յարատեւ դէմքին վրայ քիչ մը ժպիտ գայ...

Բոստոմ վազեց, շուտով շիւք մը բերաւ դրաւ հօրը առջևը:

- Նա, հայրիկ, քեզի համար է: Պ. Վարդան կարգացած դրէին վրային վեր բարձրացուց իր աչքերը, աղմկէ նայեցաւ:

- Ի՞նչ... օյի՛... չուրեց հաւատալ: Ինչ է, հարսանիք կայ թէ նշանուոք...

- Ոչ հարսանիք կայ, ոչ ալ նշանուոք: Այսօր, այս ալ այսպիսի բան մըն է: Անտարտառի մանաւանդ շատ ուրախ էին շոտ այսօր քանի մը տրախմի վառարանէն է, չի գիտեր ի՞նչպէս ծախի, ի՞նչ լաւ բան է կ'ըր աշխատանքը եւ արդար վառարանէն է...

Ծաչին վրայ արամաղ բութիւնները կ'աւանդէր: Կամայ դէպի լաւ ընթացան: Երախաները մանաւանդ շատ ուրախ էին Միս, փիլա եւ դեռ ուրիշ բաներ, որ անտարտառի տեսած չուներն: Երկու տուն իրիկներու զէմքին վրայ կասկածանքներով իրիկներ կային: Կուտէին, կը բայց անոնց միտքը որիչ տեղ էր: Իրօք այս բոլորը Աշտարի մէկ օրուան արթար վառարանէն էր, թէ՛ օ՛, անհաստատուէր էր:

Իրիկներու տուն վերադարձաւ քիչ մը կայի երեսով, բայց կարծես գոհունակ: - Հոգ մի ընէք, պատասխանեց անոնց

ԱՐԱՄԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

« ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՒՐԻ »
ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

ԿԱՐԵԼԻ՞ Է ԱՊՐԻԼ Թ.Ս.ՆՅ ՔԵԱՆԱԼՈՒ

ՃՇՊՈՒՄ ՄԸ

Շարաթ Իրիկուն « Հայաստանի Սուր »
Ընկերակցութեան վիճակունձ էր « Ան -
ճանօթ Զինուորին բողի արծարծում » ք:
Ներկայ եղած են զանազան անձնատուր-
թիւներ ինչպէս Չօր. Զեկրի կողմէ
գնդ. Պորպօ, Նախկին Ռազմիկներու նա-
խարարին կողմէ Պել - Ատա, Տայր Ֆե -
րան, Չօր. Միշուտէ (Բանակներու նա -
խարարութիւն), Փիլոյ (Փափոնի կող -
մէ), Տիւրքի և Մըհմէ (ամերիկեան լե -
զէտն), Չօր. Ֆիլիփսօ և և և և և և և :

Կարծիք մը անձնատուրութիւններ ինչպէս
մտտեալ ժուէն և Չօր. Քէօնիկ յու
յայտնած են իրենց սկստաւայ բացակա -
յութեան համար « Անձնօթի » տրուած
այս յարգանքին առթիւ և Չօր. Քէօնիկ
նոյնիսկ չեւտած է « այդ անձնօթը, զու -
ցէ Հայ է » :

« Պատուոյ զինք » մը տրուած է արա -
բողութեան և Երբ, որու ընթացքին չնոր -
հակալութեան խօսք մը ըսած է ընկե -
րակցութեան նախագահը :

նով մը՝ « Ինչ էլ զլիւն » մը, « Մի լար » մը և
« Անտուներ » :

Արուեստագէտ Արուեստ Գոթիթեան
ուպուրիչ չեւտով և ապրումով արտա -
սանց Սիմանթոյի « Գաղափարին » և
Զարեհի « Հայաստանին » ջերթուածները :

Օրուան բանաստեղծ էր ընկեր Սաշիկ
Մկրտիչեան : Սիւնեաց աշխարհի դաւակ
Սերգէյ Յովհաննիսեան , Անդրկովկասի
հայաշատ և , յատկապէս , Վասպուրա -
կանի մէջ ունեցաւ բեղնաւոր գործու -
նէութիւն մը, որու ընթացքին ի յայտ
բերաւ կազմակերպիչ գեղարվարի և արի
կուսակցի մը բոլոր արժանիքները : Այն
ժողովրդականութիւնը որ Արամ շահած
էր Վասպուրականի և Հայաստանի հան -
րապետութեան օրերուն պէտք է վերա -
դրել այս անցուղական հայրերին անվե -
րապահ նուիրումին և բարոյական ան -
վիճելի առաջնութեան :

Բանաստեղծ, ապա, անդրադարձաւ Ա -
րամներու սերունդին կատարած անվի -
ճելի գործերուն և յայտարարեց , թէ ,
զժբարտարար , այսօր , հայրենիքի մէջ
անտեսուած են անոնք , անտեսուած են
անոնց գործերը : Բայց թէ պիտի դայ
օրը , երբ Երեւանի և այլ քաղաքներու
կեդրոնական հրատարակչութիւնը վրայ
հայ ժողովուրդը ինք իր ձեռքով պիտի
բարձրացնէ անոնց յուշարձանները :

« Արամ Մանուկեաններու յիշատակը
յաւերթ անթաղում պիտի մնայ րոլոր
հայրենասէր և ազատութեան գաղափա -
րով հրդեհուած Հայերու արտին մէջ » :

Հանդէսի պաշտօնական բաժինէն ետք,
ներկաները բոլորուեցան սեղաններու
շուրջ : Յարգարար եղան երգեր , ար -
տասանութիւններ : Սեղանապետ Շիր -
մանեանի հրաւերով խօսք առին ընկե -
րան Ժ. Միրիճեան , Ժ. Փարամուտեան :
ՇՐՋՈՒՆ Թ.ՋՍԿԻՅ

Կարելի՞ է երբեք չքննադատ : Ահա հար -
ցում մը , որուն դիտարկումը դեռ չէ զը -
տած պատասխանը , և սակայն ներկայիս
դոյութիւն ունին մարդիկ , որոնք սաս -
նեակ տարիներէ ի վեր աչքերնին չեն
փակած :

Ահա , օրինակ , Մարմնօ քաղաքէն շուկ -
տացի Օլաֆ Էրիքսոն , որ 77 տարեկան է
46 տարիէ ի վեր անքուն է : 1919ին կրի -
փէ հիւանդացած է և հաւանաբար իր ու -
ղեղին մէջ ըսելի կեդրոնը վնասուած է :
Բոլոր միջոցները ապարդիւն անցած են ,
ոչ մէկ կերպ կարելի եղած է զայն քնա -
ցընել և քանի մը տարի առաջ պէտք է -
ղած է գործողութեան ենթարկել : Մասնօթ
թմբեցուցիչները ոչ մէկ ազդեցութիւն
ունեցած են և հազիւ տեղական թմբ -
ցուցիչներով կարելի եղած է զօժարու -
թեամբ գործողութիւնը կատարել : Երբ
կ'ուզէ հանգչիլ , կ'ունակ վրայ կը պառկի
և առաստաղը կը դիտէ :

Նման վիճակի մէջ կը գտնուի Լոնտոն -
ցի էտուլըրտ Սիանի , որ 1941ին զժբար -
տութիւնը ունեցած է ականատես ըլլալու
իր նշանածին սպանութեան դերման օ -
ղանաւերու արձակած ոռուժի մը պայ -
թումէն : Այդ օրէն ի վեր կորսնցուցած է
իր բունը և ժամանակէն առաջ ձերա -
ցած : Սիանի այսպէս կը ներկայացնէ իր
կեանքը . « Գիշերուան և ցերեկուան մի -
ջե տարբերութիւն չեմ կրնար դնել . ին -
ծի համար դոյութիւն ունի միայն իրա -
րու յաջողող ժամերու շրթայ մը : Այն -
քան ատեն որ ցերեկ է , տանելի է , քանի
որ խանութը կը կենամ , բայց երբ լոյսե -
րը կը մարին , ինձի համար կը սկսին
չարչարանքի ժամերը : Ինքզինքս յուսա -
հատօրէն միտակ կը զգամ , ինչպէս նա -
ւարեկեալ մը ծովին մէջտեղ » :

Իր այս վիճակին լուծում մը տալու համար ,
Սիանի սկսաւ խանութը կէս օրէ ետք
ժամը 3ին բանալ և առաւօտեան 3ին դո -
ցել : Գիշերը խանութը բաց մնալով , յա -
ճախորդներու թիւը շատցաւ և մրցա -
կիցները սկսան բողբոջիլ : Թագուհիին
ուղղուած ազերսագիր մը արդիւնք չու -
նեցաւ :

Անքուն մարդոց շարքին է նաեւ սպա -
նացի Վալենթին Մետիսա Փոլիեր , Ալ -
պարիէ քաղաքէն 60ամեայ աշխատուոր
մը : Արկածի մը հետեանքով ան իր քու -
նը կորսնցուցած է 12 տարի առաջ : Այդ
օրէն ի վեր , Մետիսա Փոլիեր կ'աշխատի
թէ զիշերը և թէ ցերեկը : Երբ կը յոգ -
նի , պահ մը կը նստի և իր ընկերներուն
աշխատանքը կը դիտէ :

ԿԱՐԵԼԻ՞ ՔԱՐԱԾԵՑԷՔ «ՅԱՌԱՋ»Ը

Երբ նամակ տարիք , միթէ բանա
լիով կրկնելիք դուրը ձեր ետեւէն :
Երբեք բանալին չեմ գործածեր ,
երբ բացակայիմ այդքան կարծ ժամա -
նակ միայն :
Փութար ակտի խօսք , բայց զսպեց
ինքզինքը :
Կ'ուզէի՞ք տիրուհի տեսնել ... Ը -
սաւ սպասուհի կրկին արտասուելով :
չառ կեկեցիկ է ...
Մենք հետեւեցանք Ալիս Պէնիթիին դէ -
պի ննջարան :
Գարլթեան կը հանդէպ , խաղաղ երե -
ւոյթով մը : Ան շատ աւելի երիտասարդ
կը թուէր , քան Սալուայի երեկոյթին :
Կարելի էր ըսել՝ մասուկ մը՝ յանձնուած
մրափին :
Փութար , իր դէմքին վրայ տարօրինակ
արտայայտութիւնով մը , դիտեց երկար -
օրէն :
Հաստիկ , ըսաւ ինձի երբ կ'իջնէ ինք
սանդուխներէն , և երգում մը ըրի :
Են չհարցուցի իրեն իր երգումին բը -
նոյթը , որովհետեւ զիւրին էր դուշակել
զայն :
Վայրկեան մը աւելի ետք , աւելցուց .
Ամէն պարագայի , խիղճս հանդար -
տած է հիմա մեծ հողէ մը : Անկողի էր
որ յաջողի փորկել խեղճը ... ան մտած
էր արդէն , երբ ինձ յայտնեցին Լորա էճ -
վարի սպանութիւնը : Այս կէտը կը մը -
խիթարէ զիս ...

« Թատերական հին դէմքեր » սիւնակին
մէջ վերջերս գրած էի դերասանուհի Հայ -
կու Ջէյթաղեանի մասին :

Պոստո բնակող իմ վարկածի բարեկամ -
ներէս , « Յատու » ի հաւատարիմ ընթերցող
Պ. Մերսոյ Մասանջեան կարդալէ ետք
այդ յօդուածը , նամակով մը կը յայտնէ
ինձի թէ Հայկու Ջէյթաղեան ողջ է ,
այժմ 60տ 72 տարեկան և կ'ապրի Երե -
ւան :

Ես Հայկու Ջէյթաղեանի դիտելի , իր թա -
ղուժը կրնայ ըլլալ որ չփոթած ըլլաւ դե -
րասանուհի Գայլուշի (Գայլեանէի) թաղ -
ման հետ , որուն դերեզմանն ալ զժբար -
տար անյայտ է այսօր , և սակայն բա -
ցարձակապէս կ'անդիտանայի որ Հայ -
կու Ջէյթաղեան Փարիզի մէջ ամուսնա -
նալէ ետք մեկնած է Երեւան և քառա -
սուն տարիներէ ի վեր հոն կ'ապրի :

Պ. Մերսոյ Մասանջեան իր նամակին
մէջ կուտայ կարգ մը մանրամասնու -
թիւներ , ըստ որոնց « Հայկու Ջէյթաղ -
եանի թողնիլը կ'ուսանի Երեւանի երա -
ժշտանոցին մէջ » թէ Հայկու Ջէյթաղ -
եան « ներկայ գտնուած է վերջերս Երե -
ւանի մէջ Տիգրանեանի « Անուշ » ի ներ -
կայացման յիանմանակին առթիւ սար -
քուած հանդիսութեան , որ հրաւիրուած
է իր Անուշի առաջին դերակատարուհի » :

Այս բոլոր մանրամասնութիւնները , ո -
րոնց Պ. Մերսոյ Մասանջեան տեղեկա -
ցած է իր կողմէն , որ Հայաստանէն
այցելած է Ֆրանսա իր եղբոր , կասկած
չեն ձգեր որ Հայկու Ջէյթաղեան ողջ է :

Այս բոլորը կը լեցնեն հոգիս անհուն
բերկրանքով և ուրախ եմ որ ... սխալած
եմ :

ԱՐՏԱՇԷՍ ԳՄԲԻԹԵԱՆ

ԿԱՐՄԻՐ ԵՐԳԻՄԱՆՔ

Զորս տարի Մոսկուայի մէջ ուսանել
ետք , երիտասարդ անփրկիկի մը կը վե -
րադառնայ իր երկիրը , ուր կ'ընդունուի
բարեկամներու խմբակի մը կողմէ :

« Գանի » տարի մնացիր Մոսկուա , կը
հարցնեն բարեկամները :
« Չորս տարի , կը պատասխանէ ու -
սանդը :
« Անշուշտ , այդքան տարի հոն մնա -
լով՝ Ռուսերու անաստուածեան համո -
գումներն ալ իւրացուցիր , կ'ըսեն ընկեր -
ները :

« Անտարակոյս , կը յարէ ուսանողը :
« Մեզի պիտի խօսի՞ս անոց մասին :
« Սիրով : Կիրակի օր , պատարագէն
ետք , կ'երթամք տեղ մը կը նստիմք՝ ու
կը խօսիմք ձեր , կ'ըսէ ուսանողը :

ԳՐՈՒՆ 10
ՃԻՆԻ ՏՐԻՎԵՐ
Երբ փողոց կ'անց , սկսանք ուղղուել
դէպի բժիշկին հասցէն , որ տուած էր
մեզի միս Ատապիս սպասուհին :
Փոքրահասակ և յարաբար ձերու -
նի մըն էր , որ ծանօթ ըլլալով Փութարի
համբալին , իր ուրախութիւնը յայտնեց
զինքը անձնապէս տեսնելու հաճույքին
համար :
« Պատրաստ եմ , պարոն Փութար , ի՞նչ
օգտակար ծառայութիւն կրնամ ունենալ
ձեզի , հարցուց ան :
« Այս առաւօտ , պարոն բժիշկ , դուք
կանուած էիք կարծեմ Միս Գարլթեա
Ատապիս սնարին մօտ :
« Այո ... ինքզ ալ ջղիկը ... Առաջնա -
կարգ արուեստագիտուհի մը ... և ի՞նչ
տխուր վարձան ... Չեմ հասկնար թէ ին -
չո՞ւ աչքս տողանալու երիտասար -
դուհիներ մոլին կը դառնան թմբեցուցիչ
թոյներու :
« Համոզուած էք դուք , որ այդ ալ -
ջիկը թմբեցուցիչներ կը գործածէր :
« Ի՞՞՞՞՞՞՞՞ Չակական կոչումս թերեւս կ'արդի -
ւեր ինձ այս բանը ըսելու ձեզի :

«ՅԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՕՆԸ

(34)

բարգարծաւ հոս ժամը վեցին ... Արդեօք
մասնատարար արտասովոր բան մը չը -
սա՞ւ ...

Սպասուհին խորհեցաւ :
« Չեմ յիշեր , պարոն : Ես հարցուցի
իրեն թէ արդեօք թէ կ'ուզէ՞ք , պատաս -
խանեց որ խմած է արդէն :

« Ահ , այո : Արդէն խմած էր թէ չը ...
ընդհատեց Փութար : Ներեցէք , տիկին ,
չարուակեցէք :

« Յետոյ սկսաւ նամակագրութիւններ
ընել , մինչև կրկին դուրս ելլելը :
« Չէ՞ք դիտեր թէ որու գրեց :
« Գիտեմ , պարոն : Գրեց մէկ նամակ՝
ուղղուած իր քրոջը , Ուոլֆիկթըն : Իր
քրոջ շարքին երկու անգամ կը զրէր կա -
նոնաւորարար : Ինք տարաւ նամակը
տուփը ձգելու համար , որպէսզի թղթա -
տարին հասնի : Բայց մոռցած էր իր ձեռ -
քի պաշտակակին մէջ :

« Դեռ այնտե՞ղ է այդ նամակը :
« Այ , պարոն , օրիորդը յիշեց որ մոռ -
ցած էր երէկ զիշեր անկողին մասնէլէ ա -
ռաջ : Ես վաղցի նամակատուն , զրոյժա -
թուղթը փակցուցի պահարանին վրայ և
նամակը սահեցուցի յատուկ տուփի մը
մէջ , ուրիկ կրնար մեկնել առանց ժա -
մանակ կորսնցնելու :

« Ա՛ ... Իսկ նամակատունը հեռու կը
գտնուի ախտեղէն :
« Այ , պարոն , ձիւք փողոցին անկիւ -
նը :

ԴԱՆԱԿԸ
ԾՈԾՐԱԿԻՆ

Փակեց պաշտակար և դառնալով սպա -
նուհին , ըսաւ .
« Գուք դիտէ՞ք թէ որու հետ ընթերց
կելի երեկոյեան Միս Ատապիս :
« Այ , պարոն :
« Իսկ որո՞ւ հետ ճաշեց երէկ ցերեկ
և թէ ի՞նչ տաւ :
« Թէ՛յր՝ չեմ զիտեր , բայց ճաշած էր
Միս Տրիվերի հետ :
« Միս Տրիվերի՞ հետ :
« Այո , իր ըւապոյն բարեկամու -
թեամբ , որ նորակառուցեանց տուն մը կը
կառնէ Մոֆֆաթ Սթրիթի վրայ , Պոնա
Սթրիթին անկիւն : Այդ հաստատութեան
անունն է « Ժընրվիէ » :
« Փութար իր նոթատարին մէջ արձանա -
գրեց հասցէն , ձիւք բժիշկին անունին
տակ :
« Հարցում մը ևս , տիկին : Կը վեր -
վէ՞ք Միս Ատապիս խօսքերը , երբ վե -

Այրի Տիկին Սիրարիկ Սարգիսեան, Տէր Եւ Տիկին Սերժ Սարգիսեան եւ դուստրուք, Տէր Եւ Տիկին Կարապետ Կարապետեան եւ զաւակը, Տէր Եւ Տիկին Պերճար Փլիշեան եւ զաւակը, Տէր Եւ Տիկին Յովհ. Մինչեան եւ ընտանեկան բոլոր պարագաները զաւուր կը ծանուցանեն իրենց աճուսնոյն, հօր, մեծ հօր, եղբոր եւ այլ զականին՝

ՍՈՒՐԷՆ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ
(Գնած Պոլիս, 1905ին)

Կակածալի մահը որ պատահեցաւ իր բնակարանը, 47 Ռիւ տը յա Պատ, Անկէն, Սեպտեմբեր 22ին :

Յուզարկաւորութիւնը կը կատարուի այսօր Ծարաթ (Սեպտ. 25) ժամը 16ին, Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցին, 15 Րիւ ժան Կուստ, Փարիզ (8) :

Մանաւոր մահադ չստացողներէն կը խնդրուի ներկայս իրբեւ այդ նկատել :

ՓՈՒԱՆ ԾԱՂԿԵՊԱԱԿԻ

